

ԼՈՒՍԻՆԵ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Արցախի պետական համալսարան

«ԱՐՑԱԽ» ԵՎ «ՂԱՐԱՔԱՂ» ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

Բանալի բառեր՝ Տեղանուն, ստուգաբանություն, Արցախ, Ղարաբաղ, սև ալգի, մեծ ալգի, բառապատճենում, հասարակաքաղաքական իրողություններ:

Տեղանունը ժողովրդի պատմության ու աշխարհագրության լեզվական պահոց է, նաև տեղանուններում և տեղանուններով է ամրագրվում տվյալ ժողովրդի պատմությունը: Դրանցով քննելի է դառնում անցյալը, որն էլ մեզ առերեսում է մեր պատմությունը:

Յուրաքանչյուր անվան մեկնաբանություն, եթե նույնիսկ այն կողմնակալ է, կարևոր է իր գոյությունը, որովհետև ավելի դյուրին է դարձնում իրական պատմության ու ճշմարտության վերհանումը: **Արցախ** և **Ղարաբաղ** անունների ստուգաբանական քննությունը եղել ու մնում է լեզվաբանների, տեղանվանագետների քննության դաշտում: Առաջադրվել են շատ վարկածներ. մեր քննության նյութն առկա վարկածների զուգադրումն է*, և պատմական տեղեկանքների ու լեզվաբանական հիմքերի վերլուծությամբ դրանց արժանահավատության հիմնավորումը:

Արցախը տարբեր անուններով է կոչվել իր պատմաքաղաքական կյանքի տարբեր շրջաններում: **Ադախ, Արցախ, Մալգէից աշխարհ, Մալգէք՝** սեպագրերի մեջ ու միջնադարյան հեղինակների երկերում: **Խաչեն, Արեւելք, Արեւելից կողմանք, Աղուանից կողմանք, Աղուանք՝** X-XII դդ., **Առան** էր կոչվել նույն շրջանում և սակավ XIII-XIV դդ., ապա և՛ **Ղարաբաղ՝** սկսած XIV դարավերջից¹:

Արցախ տեղանվան վկայությունը դեռևս մ. թ. ա. VIII դարից է. սեպագրերում վկայված՝ **Ադախունի**²: «Վանի կամ Արարատյան հայկական թագավորու-

* Հոդվածում ներկայացվում են ֆնմվող տեղանուններին վերաբերող առկա վարկածները՝ թե՛ գիտական, թե՛ ոչ գիտական՝ գեղարվեստական կամ մտացածին մեկնաբանություններ:

¹ **Բ. Ուլաբաբյան**, *Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը*, Երևան, 1994, էջ 7:

² Նույն տեղում, էջ 12:

թյան երկու գահակալները մ. թ.ա. VIII դարում արձանագրել են, որ իրենք դեպի հյուսիս, հյուսիս-արևելք կատարած արշավանքներով իրենց տերությունն են միացրել նոր երկրամասեր, որոնց հետ է եղել նաև Ադախ-Արցախը/ սեպագրերում՝ Ադախունի/։ Որ Ուրտեխեն կամ Ադախունին Արցախն է, վկայում են նաև Սարգուրի Բ-ի արձանագրության մեջ հիշատակվող Արցախի գավառների, բնակավայրերի և գետերի՝ **Հարճլանք, Պարժկանք, Պիանք, Գիշի, Տրտու, Կուրական անունները**»³։ «Սարգուրի Բ-ի կողմից Գանձադուան տարեգրության հատվածներից մեկում Ք. ա. 741 թ. տեղի ունեցած դեպքերի կապակցությամբ և Ռուսա Ա-ի Ծովինարի ժայռափոր արձանագրության մեջ հիշատակված է **Ադախունի տեղանունը**»⁴։ Ռուսա թագավորի անվան հիշատակությամբ մի արձանագրություն է հայտնաբերվել Ստեփանակերտի ու Խոջալուի դամբարանաբլուրների պեղումների ժամանակ, որը վկայում է հայկական այդ թագավորության մեջ **Ադախ-Արցախ հիշատակությունը**»⁵։ Թե՛ Բ. Ուլուբաբյանը, թե՛ Վ. Բալայանը, առկա պատմական հնագույն աղբյուրները հիմք ընդունելով, հավաստում են Ադախունի և Արցախ անունների նույնականությունը։

Արցախը հիշատակում է նաև Ստրաբոնը՝ Օրխիստինա անվամբ. Օրխիստինան Արցախի հունարեն հորջորջումն է։ Ստրաբոնը, մ.թ.ա. I դարի և մ.թ. արշալույսի Հայաստանը նկարագրելով որպես ականատես, նրա կազմի մեջ ներկայացրել է Շակաշեն-Ուտիքը և Օրխիստինա-Արցախը՝ որպես այդ երկրի բուն նահանգներ⁶։

Արցախ տեղանվան վկայությունը **Արձախ** հնչատարբերակով տեսնում ենք հայ պատմագրության մեջ. «Տասներորդ նահանգն է **Արցախ** կամ **Արձախ**»։ Ըստ Բուզանդի Պատմության IV դարի երկրորդ կեսին «ամուր գաւառն **Արձախայ**» բաժանվեց Մեծ Հայքից⁷։ Եղիշեն նույնպես հիշատակում է **Արձախ** անունը՝ երեք անգամ⁸։

Ադախ հնչատարբերակով տեղանուն նույնպես հիշատակված է հետագա ժամանակների հայկական աղբյուրներում։ Ուլուբաբյանի կարծիքով **Ադախ**

³ **Յ. Կարազոյլյան**, Սեպագիր տեղանուններ Այրարատում և հարակից նահանգներում, Երևան, 1998, էջ 40-41։

⁴ **М. В. Никольский**, “Клинообразные надписи Закавказья”, *Материалы по археологии Кавказа*, V, Москва, 1896, с. XXXI, **Г. А. Меликишвили**, *Урартские клинообразные надписи*, Москва, 1960, с. 266.

⁵ **Բ. Ուլուբաբյան**, նշվ. աշխ., էջ 18։

⁶ **Страбон**, *География*, (Перевод, статья и комментарии **Г. А. Стратановского** под общей редакцией проф. **С. Л. Утченко**. Редактор перевода проф. **О. О. Крюгер**), Москва, 1964, XI, XIV, 5.

⁷ **Փասառոսի Բիզանդացույ**, *Պատմութիւն Հայոց*, Թիֆլիս, 1912, էջ 314։

⁸ **Եղիշէ**, *Մատենագրութիւնք*, Վենետիկ, 1859, էջ 72, 97, 99։

նախնական անվանումն անխաթար պահպանվել է միջնադարում. նույն՝ Աղախ անունով բնակավայր գոյություն ունի Գանձասարի վանքի մոտերքում: Այդ մասին վկայում են նաև Մխիթար Գոշը, Ստեփանոս Օրբելյանը և ուրիշներ:⁹ Վ. Բալայանը հավանական է համարում «Աղախ-Արցախ մեկ բնակավայրի անվան հետագա տարածումը ողջ նահանգի վրա»¹⁰:

Այդ ամենից անվան ստուգաբանության առաջին վարկածն է առաջ քաշվում՝ **Արցախն Ուրտեխե-ի** հնչյունափոխված տարբերակն է:

Ուրտեխե-Արձախ-Արցախ նույնականության փաստի առիթով Հովհ. Կարապոզյանը, հղում անելով Մ. Նիկոլսկուն¹¹, նշում է, որ անունը «հիշատակվում է միայն Սարգսրի Բ-ի մոտ՝ Սևանա լճի հարավային ափին, Ծովակ գյուղում գտնված արձանագրության մեջ, իսկ Ուրտեխե-Արձախ գուգահեռը, առանց լեզվական քննության, առաջին անգամ առաջարկել է Գ. Ղափանցյանը»¹²: Կարապոզյանի մեկնաբանությամբ՝ Ուրտեխե երկրանվան մեջ ու-ն հավանաբար հնչել է օ, այսինքն՝ **Օրտեխե**, քանի որ հայերենին հատուկ է ոչ թե ու > օ, այլ օ > ա հնչյունափոխությունը, որը սպասելի է նաև տվյալ դեպքում: Սակայն, ուրարտահայկական անցումներում **t > ձ** հնչյունափոխություն հայտնի է, ուստի, կարելի է եզրակացնել, որ, հավանաբար, գոյություն է ունեցել նախնական ***Orgehe** ձևը: Եվ հայերենին հասել է այդ ձևից առաջացած ***Orgehe** տարբերակը, որից օ > ա, e > ա անցումներով **g > ձ** հնչյունափոխությամբ և վերջին կիսաձայն e-ի անկմամբ ստացվել է **Արձախ**, որը վկայված է, իսկ հետագայում **ձ > ց** հնչյունափոխությամբ՝ **Արցախ**, որը նույնպես վկայված է¹³:

Խոսելով Գ. Ղափանցյանի տված քննության մասին՝ Կարապոզյանը մեկնաբանում է. «Այն, սակայն, լայն տարածում չի գտել, թերևս, լեզուական քննութեան ենթարկուած չլինելու համար, կամ որոշ շրջանակների՝ նրա որոշակի քաղաքական նշանակությունը երկուստեք անտեսելու կամ քողարկել ցանկանալու պատճառով»¹⁴:

Բաբկեն Հարությունյանը Արցախի տեղագրության հարցի շուրջ իր դիտարկումներում նշում է, որ «սեպագիր արձանագրությունների լեզուն չի տարբերա-

⁹ Բ. Ուլաբաբյան, նշվ. աշխ., էջ 13:

¹⁰ Վ. Բալայան, *Արցախի պատմություն*, Երևան, 2002, էջ 34:

¹¹ М. В. Никольский, “Клинообразные надписи Закавказья”, *Материалы по археологии Кавказа*, V, Москва, 1896, с. XXIX.

¹² Г. А. Капанцян, *Chetto-Armeniacs*, Ереван, 1931, с. 104.

¹³ Հ. Կարապոզյան, «Արևելյան Հայաստանի ուրարտական տեղանունները», *ԼՀԳ* № 10, 1978, էջ 55-76:

¹⁴ Հ. Կարապոզյան, նշվ. աշխ.:

կում ու և ո հնչյունները, այսինքն՝ թե՛ մեկը և թե՛ մյուսը տրվում են ու գրությամբ: Սակայն **Օրթիստենե** անվանաձևը վկայում է, որ **Ուրտեխեն** հնչել է **Օրտեխեն**: Ավելի ուշ հայկական աղբյուրների **Արդախ** անունը պարզորոշ ցույց է տալիս, որ կատարվել է $o > a$ հնչյունափոխությունը, որը հատուկ է հնդեվրոպական լեզուներին: Այդ կարող էր կատարվել այն դեպքում, եթե Կուրի և Արաքսի միջագետքը բնակեցված լիներ հնդեվրոպական հայկական բնակչությամբ: Բոլոր «պատմագիտական» մարզանքները՝ նշված շրջանում աղվանական կամ կովկասյան ցեղերին ազգակից բնակչություն տեսնելու վերաբերյալ, անիմաստ են ու անպտուղ»¹⁵: Այսինքն՝ Արցախը վաղնջական շրջանից էլ հայալեզու բնատարածք էր:

Ուրարտերենի և հայերենի տվյալները զուգադրելով՝ բանասեր Արտավազդ Նազարյանն էլ գրեթե նույն վարկածն է դիտարկում՝ մեկ այլ մեկնաբանությամբ:

Մատնանշելով բիայնական արքայի՝ Սարգուրի Բ-ի՝ «**Կտրեցի մինչև Ուրթեխե երկիրը**» արձանագրությունը և **Ուրթեխե-Արցախ** նույնականությունը՝ նա որպես բառարմատ է դիտում **Որթ**-ը: Նաև նշում է, որ ուրարտերենում **Ու** սեպագրով արտահայտվում էր նաև **Օ** հնչյունը, որի համար այդ լեզվում առանձին գիր չկար: Ուրարտերենը չի տարբերակում նաև **Տ** և **Թ** հնչյունները: Ուրեմն **Ուրթեխեն** կարող էր արտասանվել նաև **Օրթեխե/Օրտեխե**: Ըստ այդմ՝ ուրարտերենը հարազատորեն պահպանել է բնիկ հայերեն **Որթ** (Խաղողի վազ, դյուրաթեք ճյուղ) բառը: Հայտնի է, որ **Ո** տառը հին հայերենում կարգում էին պարզապես **Օ**: Այն, որ ուրարտերեն **Ուրթեխե**-ի **Ու**-ն հնչել է **Օ**, ապացուցում է նաև հունարենում ավանդված Արցախի հնագույն հիշատակություններից մեկը՝ **Օրխեստեն՝ Օրխիստինա**, - հաստատում է Նազարյանը¹⁶: Ըստ այդմ՝ նա հանգում է, որ մեր թվարկության սկզբներին բառի արմատը հնչել է **Որթ** կամ **Որթս** (կանոնավոր հայցականով), իսկ ամբողջ բառը հնչել է **Օրթսախ**:

Եխե/ախ վերջնամասնիկը խոռոչառարտական հատկացուցչական-տեղանվանական մասնիկն է: Հայերեն հետագա զարգացումներում **Թ+Ս** հնչյունախումբն օրինաչափորեն դառնում է **Յ**: Դա էլ հենց պատճառ է հանդիսացել, որ բառի իմաստը միագնվի, և **Օրթսախը**, դարձյալ հայերենի օրինաչափություններով, դառնա **Արցախ**, ինչը և հայերենով հաղորդվել է **V** դարից:

Պատմական աղբյուրներին զուգահեռ՝ լեզվաբանական քննությամբ ևս հաստատվում է **Արցախ** տեղանվան վաղնջականությունը:

Արցախ բառը բաղադրյալ կազմություն ունեցող անվանում է դիտվում:

¹⁵ Բ. Հարությունյան, «Արցախի, Հայոց Արևելից կողմերի և Ղարաբաղի տարածքի հարցի շուրջը», ՊԲՀ № 1-2, 1994, էջ 265:

¹⁶ Ա. Նազարյան, «Ի՞նչ է նշանակում Արցախ», Արագածոտն թերթ, 2013, մարտ 13:

Գրիգոր Ղափանցյանը, իսկ նա անառարկելիորեն Ուրտեխեն նույնացնում է Արցախին, հաստատում է, որ Հայաստանի տեղավանագիտության մեջ պահպանվել են մի շարք անուններ — ախ վերջավորությամբ¹⁷։ Ինչպես՝ Աթթախ, Շատախ, Քաշախ, նաև Արծախ/Արցախ/։ Այդ —**ha** մասնիկը խոռոչաբարձրական — **hi** հատկացուցական-տեղանվանական մասնիկն է՝ **i-a** հերթագայությամբ։ Գեորգ Զահուկյանն այս կարծիքը հավանական է համարում՝ նկատի ունենալով ածանցի տարածման ոլորտը ու նաև հնարավոր համարում խեթալուվական աղբյուրից առաջացումը¹⁸։ Տեղանվանիչ այս ձևույթը, փաստորեն, նշված հնագույն այդ ժողովուրդների հետ ունեցած մեր հարաբերությունների վկայությունն է։

Անվան արմատ է դիտվում **արձ/արձն**-ը, որը նշանակում է քար, ժայռ։ Այդ վարկածը հավաստող փաստեր ևս առկա են։ Այսպես՝ Հարություն Խոզանյանը, քննելով **Ալզի/Աղձնիք/** տեղանվան ստուգաբանությունը, հանգում է այն տեսակետին, որ **Աղձնիք**-ի հիմքում ընկած է **Աղձն/Արձն** տեղանունը, որը եղել է **Աղձնիքի** առաջին գավառը։ Ապա, միևնույն արմատածագումնաբանական առնչակցության մեջ է դիտարկում **Ալզի/Աղձն/Արձն** տեղանունները։ Ամփոփելով՝ նշում է, որ **աղձ/արձ** արմատը, ըստ երևույթին, ընկած է **պատմական Հայաստանի մի շարք տեղանունների հիմքում** և նշանակում է ժայռոտ, լեռնային, քարքարոտ միջավայր ունեցող կամ այդպիսի տարածքում գտնվող. օրինակների շարքում նա նշում է **Արծախ-Արցախը/ Արծախայ աշխարհ**¹⁹։

Վահան Գալսերյանը Վանի թագավորության արձանագրություններում վկայված ուրարտական *alzihi*/ բառի հավաստի մեկնություն է համարում **արձ-ը/ արձանը**։ Եվ նշում, որ *l > r, e > a* անցումները բնորոշ են սեպագրից հայերենին անցած ձևերում։ Հետաքրքրական է, որ եթե **Արծախ**-ը ստուգաբանվի **արձ + ախ** բաղադրիչների վերլուծությամբ, ապա այն սեպագիր արձանագրության մեջ վկայված *alzi* բառամիավորի *l > r* անցումով առաջացած հայերեն **արձ**-ն է, իսկ *e > a* անցմամբ հիմնավորվում է **Ուրտեխե**-ից **Արցախ** անցումը²⁰։

Հատկանշական է, որ բանահավաք Լևոն Հարությունյանն էլ, **Արցախ** տեղանվան մեկնաբանության մեջ, նույն մտքին է հանգում՝ **արձ** արմատն է առանձնանշում, բայց տվյալ դեպքում այդ ստուգաբանությունն առավելապես

¹⁷ Гр. Капанцян, Историко-лингвистические работы, К началу истории армян, Ереван, 1956, с. 435.

¹⁸ Գ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 331։

¹⁹ Հ. Խոզանյան, «Ալզի (Աղձնիք) տեղանվան ստուգաբանության հարցի շուրջ», ՊԲՀ № 1, 2012, էջ 190-191։

²⁰ Վ. Գալսերյան, «Սեպագիր մի ֆանի արձանագրությունների քարգմանության մասին», ՊԲՀ № 2, 2014, էջ 154-155։

բանագիտական մտքի հանգում է: Նա նշում է, որ «Արցախ /Արձախ/, Կաղար-ծի/կախված²¹ արձն⁺ի/տեղանուններն ունեն նույն արմատները՝ արձ/ն/, ինչը նշանակում է քար, ժայռ: Նա Արցախ բառի բառակազմական պատկերը արձ և եղ բաղադրիչների տրոհմամբ է ներկայացնում, իմաստը՝ քարեղեն, ժայռեղեն վայր: Նրա կարծիքով՝ Արցախը ոչ միայն տարածաշրջանի, այլև աշխարհի հնագույն տեղանուններից է:

Այսպիսով Արցախ անվան ստուգաբանական մյուս վարկածը՝ արձ⁺ախ բաղադրիչների տրոհմամբ, մեկնաբանվում է որպես ժայռեղեն, լեռնային տարածք:

Արցախ անվան մեկ այլ մեկնաբանություն է տալիս Ապրես Բեկնազարյան-ցը՝ բխեցնելով այն Սար և ցախ բարդությունից՝ լեռնային ու անտառային նշանակություններով: Ըստ որում, հետազայում ս հնչյունի անկմամբ բառանվանումը դարձել է Արցախ²¹: Ըստ Ալեքսանդր Վարպետյանի՝ Արցախը ուրարտական ժամանակաշրջանում կոչվում էր Արիա²²: Գագիկ Փխրիկ-Սարգսյանն Արցախ-ը մեկնաբանում է «Արի երկրի անտառածածկ մաս» նշանակությամբ: Հեղինակը մեկ այլ տարբերակով ար-ը համադրում է այրված, սև գույնի, իսկ ցախ-ը՝ անտառ, մացառ հասկացություն հետ²³: Ղևոնդ Ալիշանն էլ գրում է. «Երկրամասի անվան ծագումն անհայտ է մնում. թերևս անհարմար չի լինի կարծել ծառերի ու թփերի ցախ անունից ծագած, ըստ երկրի անտառոտ բնույթի. այն մեր նախնիները գրում են նաև ձ տառով»²⁴:

Սլավա Սարգսյանն էլ, ներկայացնելով տեղանվան բազմաթիվ ստուգաբանական վարկածները, նաև մեկնաբանելով ադրբեջանական ստուգաբանական ճիգերը, նշում է, որ այդ անվան մեջ ծագումնաբանորեն առկա են արեգակի և լուսնի պաշտամունքը խորհրդանշող բառեր կամ բառարմատներ: Ար-ը խորհրդանշում է արեգակը: Յախ-ը (նախանվանումը դրափոխությամբ՝ խաց), կաս արմատի տարբերակներից մեկն է, որը վերաբերում է լուսնին՝ ունենալով նաև սուրբ, պաշտամունք նշանակությունը: Այս Սարգսյանը հանգում է այն մտքին, որ Արցախն ունի լեռնային սրբացված տարածք իմաստը, և ընդգծում, որ անվանումը ձևավորվել է դարերի ընթացքում, ենթարկվելով փոփոխությունների՝ հետևյալ անցումներով՝ Կասակ-Կարսակ (երբ տեղանվան առաջին վանկի ձայ-

²¹ Ա. Բեկնազարեանց, Գաղտնիք Ղարաբաղի, ՍՊԲ, 1886, էջ 148:

²² Ա. Վարպետյան, Ինքնություն, Երևան, 1993, էջ 134:

²³ Գ. Փխրիկ-Սարգսյան, «Դարաբաղ անվան մասին», Հայաստանի Հանրապետություն, 1998, 4-ը սեպտեմբերի:

²⁴ Ղ. Ալիշան, Արցախ, Երևան, 1993, էջ 7:

նալորից հետո հանդես է գալիս **ր աճականը՝ դառնալով Կարցակ, ապա՝ Կարցախ ու Արցախ՝ կ-ի անկմամբ**²⁵:

Բոլոր այս մեկնաբանությունները պարզ հաստատում են այն իրողությունը, որ **Արցախը** հնագույն տեղանուն է, իսկ այդպիսի տեղանունների ստուգաբանությունը հավանական ու անհավանական վարկածների հիմք է տալիս:

Թե՛ պատմագիտական, թե՛ լեզվաբանական և թե՛ բանագիտական մտահանգումները **Արցախ** անվան ստուգաբանական տարածքում մեկտեղվում են: Այն է՝ **Արցախը** վաղնշական շրջանից հայապատկան ու հայալեզու տարածք էր, ու որքան էլ տարբեր են տեղանվան ծագման ու նշանակության մեկնաբանությունները, միանշանակ է այդ անվան հնագույն վկայությունը պատմական հուշարձաններում: Փաստ է՝ որքան հին է անվան պատմությունը, այնքան մթագնված է նրա բառական նշանակությունը, ինչն էլ հիմք է տալիս տարբեր վարկածների գոյության, ինչը գրեթե անհնար է դարձնում այս կամ այն տարբերակը որպես բացարձակ ճշմարտություն ընդունելը:

Բոլոր մեկնաբանություններում աշխարհագրական նկարագիրն է ընդգծվում՝ որթաստան, լեռնային, անտառային, դաշտային: Այսօր էլ հազարամյականներ անց, այդ բոլոր նկարագրերը **Արցախին** բնորոշ են: Բայց առաջնայինը, հակված ենք կարծելու, եղել է որթաստանը: Հստ այդմ՝ ո/օ/րթս և ախ բաղադրիչների վերլուծությունը կարելի է համարել **Արցախ** տեղանվան հավանական մեկնաբանությունը: Այդ մտահանգումը, կարծում ենք, հիմնավորվում է նաև **Ղարաբաղ** տեղանվան՝ որպես **Արցախ-ի՝ Մեծ այգի** նշանակությամբ պատճեն լինելու ստուգաբանությամբ:

Սկսած XIV դարից, Արցախ հայաշխարհը պատմական աղբյուրներում **Ղարաբաղ** է կոչվում:

Ղարաբաղ տեղանվան մի հիշատակություն կա վրաց «Քարթլիս ցխովրեբա» ժամանակագրության մեջ, որտեղ կարդում ենք. «Ուլո/Հուլավո՝ Չինգիզ խանի թոո/ խանը ...եկավ, հասավ իր ամառային կայան Ալատաղը, իսկ ապա գնաց ձմռան բնակատեղի, որին արդ **Ղարաբաղ** ու **Մուղան** են կոչում»²⁶: Հստ Պարույր Մուրադյանի՝ սույն հիշատակումը **Ղարաբաղի** առաջին անվանանշումն է պատմագրության մեջ (1316-18 թթ.)²⁷:

Ապա Պարույր Մուրադյանը նշում է, որ **Ղարաբաղ** անվանումը պարսկական

²⁵ Ս. Սարգսյան, Արցախի բնակավայրերը (ստուգաբանություններ), Երևան, 2018, էջ 15-17:

²⁶ Վրաց ժամանակագրություն, քարգմ. Բին վրացերենից, առաջաբանը և ծանոթ. Պարույր Մուրադյանի, Երևան, 1971, էջ 112: Նաև Մելիսեթ-Քելե, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Կ. Բ, Երևան, 1936, էջ 59:

²⁷ Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X-XVI դդ., Երևան, 1975, էջ 41:

ծագում ունի: Ի տարբերություն հարթավայրային մասի, որն անվանվում էր **Բաղ-ի Սաֆիդ** (սպիտակ այգի), երկրամասի լեռնային հատվածը սկսել է անվանվել **Բաղ ի Սիահ**, որը թուրքալեզվական իմաստավորմամբ վերափոխվել է **Կարաբաղ-ի (Սև այգու)**²⁸:

Ղարաբաղ անվան հիշատակում կա նաև XIV դարի պարսիկ մատենագիր Համդալլահ Ղազվինիի գրքում՝ 1334-44 թթ. դեպքերը նկարագրող հատվածում՝ «Առանի Ղարաբաղ»²⁹:

XVI դարի թուրք պատմագիր Փեշևի Իբրահիմը իր հայրենակիցների ասպատակությունների մասին խոսելիս (1533 թ.) նշում է նաև Ղարաբաղը. «Մտան Ղարաբաղ կոչված երկիրը, որն իր լեռներով ու հարուստ այգիներով շատ հայտնի մի գավառ է Աջեմի (Պարսկաստան-Պարսկաստանի հպատակ) երկրում»³⁰:

XVI դարի հեղինակ Հովհաննիսիկ Ծարեցին **Ղարաբաղի** փոխարեն գործածում է «**Սեալ այգի**»³¹, սակայն չենք կարող պնդել, որ այն տարածված անուն է եղել Ղարաբաղի համար, որովհետև Ծարեցու մեկ այլ ժամանակակցի մոտ «**Ղարայպաղ**»³² է հիշվում այդ երկիրը:

Ղարաբաղ անվան ստուգաբանության տարբեր վարկածներ կան: Ամենատարածված մեկնաբանությունը բառի բաղադրիչների սոսկական թարգմանություն է վերհանվում՝ **կարա** (սև) և **բաղ** (այգի): Տեղանունների այդօրինակ ստուգաբանությունը ճիշտ չէ, այսինքն՝ բառիմաստը տեղանվանական նշանակությունը նույնացնելը լեզվաբանորեն ու պատմականորեն չի արդարացվում: Առավել ևս՝ երբ այն մեկնաբանվում է համաժամանակյա դիտվածքում: Իրականում, բոլոր մեկնաբաններն առաջնահերթել են ղարա-ի մի նշանակությունը միայն: Ինչպես՝ Կառլ Գանը հակված էր **կարա** (սև)-ի տակ հասկանալու **մուգ**

²⁸ П. Мурадян, *История-память поколений*, Ереван, 1990, с. 76:

²⁹ В. Г. Тизенгаузен, *Из избранной истории Хамдаллаха Казвини и продолжений к ним* (Сборник материалов, относящихся к истории Золотой Орды II), Москва – Ленинград, Издательство АН СССР, 1941, с. 90.

³⁰ Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Ա (Օտառ աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 1, թարգմանություն թուրքերեն բնագրից, ներածությունով, ծանոթագրություններով, տեքմիսաբանական բառարանով և հավելվածով, կազմեց Ա. Խ. Սաֆրաստյան), Երևան, 1961, էջ 33:

³¹ **Հովհաննիսիկ Ծարեցի**, Սամուէլի քահանայի Անեցայ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 193, Մանր ժամանակագրություններ, կազմ. Վ. Ա. Հակոբյան, հ. Բ, Երևան, 1956, էջ 245:

³² Ձեռ. ՄՄ 4173, ք. 95ա, հմմտ. Մանր ժամանակագրություններ, հ. Բ, էջ 252:

կանաչ, թանձրախիտ իմաստները³³: Նույնը նաև Ղևոնդ Ալիշանի մեկնության մեջ ենք տեսնում: Նա ընդգծում է, որ Արցախա աշխարհը Գարապաղ են անվանում այլազգիները, որ նշանակում է Սև այգի, այսինքն՝ բազմաթիվ այգիներով ստվերված³⁴, որը փաստորեն Գանի նշած թանձրախիտ նշանակության հետ է նույնանում:

Մակար Բարխուդարյանցի կարծիքով էլ գործածական էր Սև այգի տարբերակը, որն էլ պարսիկները թարգմանաբար դարձրել են Ղարաբաղ³⁵:

Իսկ Բագրատ Ուլուբաբյանի համոզմամբ՝ կարա բառի մեջ պիտի տեսնել ոչ թե սև, այլ նրա երկրորդ շատ տարածված իմաստը՝ մեծ: Թյուրքական լեզուներում ղարադամ — մեծ տուն, կամ Ղարա Գրիգոր՝ Մարեցի Գրիգոր Մեծ իշխանին էին անվանում³⁶:

Գրիգոր Ղափանցյանը գտնում է, որ ղարա նշանակել է ցեղ, և այդպիսի կառույցներ է համարում Փայտակարանը, Բաղակարանը, Դաշտակարանը, որոնց մեջ կարան-ը՝ նույն ղարա-ն, ցեղ է կոչվում: Բագրատ Ուլուբաբյանն անընդունելի է³⁷ համարում Գրիգոր Ղափանցյանի՝ Բաղակարան-Ղարաբաղ նույնականացմամբ մեկնաբանությունը: Ղափանցյանի այն հավաստմանը, թե արաբ պատմիչ Բալազուրին ունի Բաղակարան տեղանուն, որը հետագայում փոփոխվել ու դարձել է Ղարաբաղ, Ուլուբաբյանը հակափաստարկ է բերում՝ Բալազուրիի «Բալական-Բաղասականը» վերաբերում էր Կուրի ձախափնյակին և բուն Աղվանքի Բաղասականի աղավաղումն է³⁸:

Փաշա Պետրոսի Օհանջանյանը Ղարաբաղը ստուգաբանում է Մեծ այգի նշանակությամբ, որը համանիշ է մոնղոլերենի Ղարաբաղ ձևին: Ըստ այդմ ղար բառմանիկն ունի մոնղոլական ծագում և իմաստաբանությամբ նշանակում է մեծ:³⁹

Լևոն Հարությունյանն էլ Ղարաբաղ անվանը մեկ այլ մեկնություն է տալիս. XIV դարում իր բազմաքանակ բերդերի ու ամրոցների պատճառով Արցախը կոչել են Ղարաբաղ, որի անհնչյունափոխ ձևն է Կալաբաղ, այսինքն՝ բերդակապ: Բաղ-ը ղաբ արմատի շրջված՝ դրափոխված ձևն է⁴⁰: Իսկ ադրբեջանական որոշ

³³ К. Ган, Опыт объяснения кавказских географических названий, Тифлис, 1909, сс. 70-71.

³⁴ Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 13:

³⁵ Մ. Բարխուդարյանց, Արցախ, էջ 2:

³⁶ Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X-XVI դդ., Երևան, 1975, էջ 43:

³⁷ Նույն տեղում, էջ 44:

³⁸ Բ. Ուլուբաբյան, Պատմաաշխարհագրական ճշգրտումներ, էջ 178-182:

³⁹ Փ. Պ. Օհանջանյան, Արցախ-Ղարաբաղ, Ազատ Արցախ հրատ., 1998, էջ 53-54:

⁴⁰ Լ. Հարությունյան, Նշխարներ Արցախի բանահյուսության, չորրորդ գիրք, Ստեփանակերտ, 2009:

աղբյուրներում **Ղարաբաղը** պեշենեգների ցեղանուն է համարվում կամ էլ բխեցվում **գարգար** ցեղանունից⁴¹:

Աշոտ Սարգսյանն էլ տեղանվան ստուգաբանության նոր վարկած է առաջադրում, ըստ որի՝ Ղարաբաղ օտարակազմ բառի հիմքում հայերեն բաղադրիչներ են՝ **Առան** և **Պաղին** (կամ՝ պաղ) և դրանք միմյանց միացնելով թուրքալեզու եկվորներն այն իմաստավորել են ոչ թե որպես **Սև այգի**, այլ **վայրի (բնական) այգի** նշանակությամբ⁴²:

Կարա բառը բազմանշանակ է: Այն ունի ինչպես **սև**, այնպես էլ **մեծ, հզոր** իմաստները, նաև **արևմուտք** կամ **արևմտյան**, կարող է նշանակել նաև **ստորգետնյա**՝ հատկապես աղբյուրների վերաբերմամբ գործածվելիս՝ ցույց տալով դրանց առաջացման պայմանները⁴³:

Ղարաբաղ անվան մեկնություններում ամենատարածվածը **Սև այգի** թարգմանությունն է, ինչն անընդունելի է տեղանվանական մեկնություններում, և եթե նույնիսկ ղարա-ն այդ դեպքում **սև** նշանակությամբ էր գործածվել, և ոչ թե **մեծ իմաստով**, որն ավելի հավանական է, ապա նույնիսկ **սև** իմաստն էլ չպիտի ընկալել այսօրվա լեզվազգացողությամբ:

Դա նշանակում է որ քննվող տեղանվան մեջ ղարա-ն մեկնաբանելի է իր բազմանշանակությամբ և ամենից առաջ՝ **մեծ, հզոր** նշանակություններով, իսկ բաղ-ը՝ արևելյան լեզուներում խաղողայգի՝ նշանակությունն ունի՝ նաև տեղանվանակերտ ցուցիչ է⁴⁴: **Այգի** նշանակությամբ բաղ բաղադրիչի մեկնաբանության արժանահավատությունը պատմական իրողություններով է նաև հավաստվում: Հայտնի է, որ «**Ղարաբաղ**» տեղանվամբ, ի սկզբանե, ըմբռնվում էր հիմնականում Մուխանքի դաշտաբերանից մինչև Դիզափայտ-Քիրս-Ղարաբաղյան լեռնաշղթա գիծը և նրանից դուրս էին մնում Սևանի արևելյան ափերը, որոնք գտնվում էին Ծար-Սոթքի կամ Գեղամա մելիքության իրավասության տակ: Հետագայում միայն, Արցախի քաղաքական աշխարհագրության մեջ սրբագրում է կատարվում, և **Ղարաբաղ** անվանումը փոխարինում է **Արցախ-Ոտիքին**⁴⁵:

Արտավազդ Նազարյանն էլ, ինչպես արդեն նշել ենք, թե՛ **Արցախը**, թե՛ **Ղարաբաղը** նույն իմաստային դաշտում էր մեկնաբանում՝ ընդգծելով, որ այդ եզ-

⁴¹ Г. А. Гейбуллаев, *Топонимия Азербайджана (историко-этнографическое исследование)*, Баку-ЭЛМ, 1986, сс. 80-81.

⁴² Ա. Սարգսյան, ««Ղարաբաղ» տեղանվան առաջացման և ստուգաբանման նոր վարկած», ՊՔՀ № 3, 2018, էջ 256:

⁴³ В. А. Никонов, *Введение в топонимику*, Москва, 1965, с. 57.

⁴⁴ Э. М. Мурзаев, *Словарь народных географических терминов*, Москва, 1984, с. 76.

⁴⁵ Եսայի Հասան-Ջալալեանց, *Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի*, Երուսաղէմ, 1868, էջ 47:

րույթներով հաստատվում է Արցախ-Ղարաբաղի խաղողի այգի, որթաստան լինելու իրողությունը, և որ այն շուրջ երեք հազար տարվա գործածություն ունի: Այսինքն՝ պարսկերենում գործածական է մնացել հին Որթք բառի ուղիղ թարգմանությունը՝ **Բաղ, Բաղ ի սեաւ**, որը վաղ միջնադարում հետ է փոխառվել հայերեն՝ **Բաղք** ձևով և օգտագործվել է՝ նշելու համար Սյունիքի և Արցախի որոշակի տարածքներ: Ապա և պարսկերեն **Բաղ ի սեաւ** հարադրությունը հետագայում բառացի թարգմանվել է թյուրքերեն՝ **Ղարաբաղ՝ Սև այգի**: Իսկ Որթն էլ բխեցվում էր Ուրտեխեից, ինչը նշեցինք Արցախ տեղանվան ստուգաբանությունը մեկնաբանելիս:

Պատմական ու հասարակաքաղաքական իրողությունները, նաև հայկական տեղանունների ուսումնասիրությունը, հիմք են տալիս ենթադրելու, որ **Ղարաբաղն Արցախի** բառապատճենումն է՝ Որթաստան-Մեծ այգի նույնական ընկալմամբ առաջացած, այլապես ժողովրդի մտածողության մեջ դարերով ամրակալված տեղանունը ոչ մայրենի հնչողությամբ այդպես չէր հանրայնանա, եթե չլիներ բնաշխարհի անվան իրական (ակամա ընկալմամբ) ու «հարազատ» թարգմանությունը: Ուստի **Արցախ-Ղարաբաղը**, կարծում ենք, իմաստային նույն դաշտում են քննելի:

Համաժամանակյա դիտվածքով՝ **Ղարաբաղ** տեղանվան նշանակությունը մեկն է. այն պատմական մի շրջանում **Արցախի** վերանվանման արձանագրություն է՝ թելադրված տվյալ պատմաշրջանի քաղաքական իրողություններով, արտահայտելով այդ շրջանի հարաբերությունները: Այսօր **Ղարաբաղն Արցախին** նույնանիշ եզր է, ու երկու անվանումներն էլ զուգակից գոյակցում են:

Իսկ այս բոլոր մեկնությունները, որքան էլ տարբեր լինեն, պատմականորեն փոփոխվող, աներկբայորեն փաստում են, որ **Արցախ-Ղարաբաղը** վաղնջական պատմություն ունի: Պատմական իրողություն է. անվանումները փոփոխական են, անփոփոխ ու մշտամնա է անվանակիրը:

LUSINE MARGARYAN

THE ETYMOLOGY OF THE TOPONYMS “ARTS‘AKH” AND “KARABAKH”

Ключевые слова: Toponym, etymology, Arts‘akh, Karabakh, Large garden, calque, historical and social-political realities.

The etymology of the toponyms **Arts‘akh** and **Karabakh** has been and remains

a subject of discussion among specialists in linguistics and toponymy. There exist many hypotheses.

All interpretations of the toponym **Arts'akh** stress some geographical description: mountainous terrain, vineyard, forest area or fields. Today, thousands of years later, all these descriptions are characteristic of Arts'akh. We tend to believe that viticulture was most important for Arts'akh. Accordingly, the analysis of the components *o / vo / rts'* and **akh** can be considered as a possible interpretation of the toponym. This is also confirmed by the etymology of the toponym **Karabakh** as the calque of the word "**Arts'akh**" with the probable meaning "**Large garden**".

The interpretation of the toponym **Karabakh** as a **black garden** or a **large garden** should not be done solely based on the material meaning of these words. The study of historical and social-political realities as well as the alienation of Armenian toponyms suggest that **Karabakh** is a calque of **Arts'akh** as a result of the identical perception of geographical realities. For the toponym in popular thinking would not have been so socialized if there hadn't been "real" and "close" translation of the denominations of the surrounding world. Therefore, we believe that **Arts'akh-Karabakh** must be analyzed in one semantic field.

ЛУСИНЭ МАРКАРЯН

К ВОПРОСАМ ЭТИМОЛОГИИ ТОПОНИМОВ АРЦАХ И КАРАБАХ

Ключевые слова: Топоним, этимология, Арцах, Карабах, большой сад, черный сад, калька, исторические и социально-политические реалии.

Этимология названий "Арцах" и "Карабах" была и остается предметом обсуждений среди специалистов по лингвистике и топонимике.

Во всех комментариях к названию "Арцах" за основу берется какое-либо географическое описание: виноградный сад, горная местность, лесная местность, поля. Сегодня, тысячи лет спустя, все эти описания характерны для Арцаха. Мы склонны считать, что главным для Арцаха было виноградарство. Соответственно, топоним "Арцах" можно интерпретировать посредством анализа компонентов *o/vo/rts'* и *ax*. Этот вывод также подтверждается этимологией топонима "Карабах" как кальки слова "Арцах" в значении "Большой сад".

Название “Карабах” не следует интерпретировать как “черный сад” или “большой сад”, исключительно опираясь на материальный смысл этих слов. Изучение исторических и социально-политических реалий, а также факты отчуждения армянских топонимов позволяют предположить, что топоним “Карабах” – это калька “Арцах”, вызванная идентичным восприятием географических реалий. В противном случае топоним в народном мышлении не был бы столь социализирован, если бы не действительный и “близкий” перевод наименований окружающего мира. Поэтому мы считаем, что “Арцах-Карабах” необходимо анализировать в одном смысловом поле.